

1452

# Մ Թ Յ Ո Ւ Մ Ե

(Հ Ա Գ Մ Ա Ն Կ)

Թարգմանեց

Յ ի ր ու հ ի Կ ո ս տ ա ն ե ա ն ց

83 Ա Բ Ը

2 - 96

Թ Ի Գ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձեի, Նիկ. փող. ա. 21.

Տիպ. М. Шарадзе, Никол. ул. д. 21.

1894



147 15

2011

ՀՎՀ 03

83-3

2-96

ԱՎ

# Պ Բ Ֆ Ո Ւ Բ Ե

(Հ Ա Փ Մ Ա Ն Ի)

1002  
5220 R

Թարգմանեց

Տիրուհի Կոստանեանց

Թ. Ի Գ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէ, Նիկ. փ. առ. 21

Տիք. Մ. Շարաձէ, Նիկ. առ. դ. 21

1894

# Մ Ի Ց Ո Ւ Մ Ն

Дозволено цензурою. Тифлисъ, 29-го Апрѣля 1894 г.



Եկ հարուստ մարդ  
պատկերներ շատ էր  
սիրում. իւր փողի  
մեծ մասընա ծախ-  
սում էր պատկեր-  
ների վերայ ու իւր  
հաշուով պահում  
էր մէկ նկարչական ու-  
սումնաբան։ Նա շատ ու-  
րախանում էր, որ իրան հիմնած գպրո-  
ցում աշակերտները կարող էին լաւ նը-  
կարչութիւն սսվորել և մրցել միմեանց  
հետ։ Այդպէս նա մէկ անգամ 500 տա-

լեր մրցանակ նշանակեց նորան, ով որ  
ամենից լաւ նկարէ մի սիրուն տեսարան:

Աշակերտների մէջ ամենից շատ ու-  
զում էին այդ մրցանակն ստանալ երկու  
հոգի. մէկի անունն էր Էմիլ, իսկ  
միւսինը Թէոդոր: Նոքա երկուսն էլ ա-  
ղանդ ունէին և աշխատասէր էին. այն-  
պէս որ նկարչութեան վարժապետն ինքն  
էլ չգիտէր թէ այդ երկուսից ո՞րը կըստա-  
նայ մրցանակը:

Թէոդորի ծնողներն աղքատ էին և  
շատ դժուարութեամբ իրանց օրական  
հացը ձեռք էին բերում, այնպէս որ  
նոքա ոչ մի կերպով չէին կարող օգնել  
իրանց որդուն, իսկ Էմիլի հայրը հարուստ  
վաճառական էր և շատ շքեղ ապրում  
էր. այդ պատճառով Էմիլը մրցանակն  
ուզում էր ստանալ փառքի ու անուան  
համար և ոչ թէ 500 առլերի: Էմիլն ու  
Թէոդորը լաւ ընկերներ էին և իրար շատ  
էին սիրում:

Մէկ անգամ մրցանակ ստանալուց

մի քանի օր առաջ Էմիլը գնաց իւր աղ-  
քատ ընկերոջ փոքրիկ, նկարչական սե-  
նեակը: Թէոդորը մէջքով նստել էր դէ-  
պի դուռը և այնքան զբաղուած էր իւր  
նկարով, որ չլսեց ընկերի ոտքի ձայնը:  
Էմիլն անշարժ կանգնած էր և ոչ մի  
ձայն, ծպտուն չէր հանում:

Մի քանի ըսպէից լետոյ Թէոդորը  
նորից վրձինն առաւ, մի քանի տեղ գըծ-  
գըծեց քաթանի վերայ, բայց նորա վարժ-  
ձեռքերը թուլացան և նա ետ ընկաւ ա-  
մոռի վերայ: Խորը հառաչանք դուրս ե-  
կաւ Թէոդորի կրծքից և նա գլուխը շար  
ժեց:

Զէ, գոլծս յաջող չի գնում, ասում  
էր նա, չգիտենալով, որ Էմիլն իրան լը-  
սում է: Եռ կողցը եմ իմ սովորական  
քաջութիւնս և ամեն բան կարծես աչքե-  
րիս առաջ խառնվում է: Էմիլն անպատ-  
ճառ կըսաղթէ և ես մրցանակը չեմ ստա-  
նայ: Արդեօք ուր կըմնայ իմ հտալիս գնա-  
լուս մեծ ցանկութիւնը: Հայրս աղքատ

է, ալնպէս ընկերներ չունեմ, որ ինձ օգնեն և ես իմ ամբողջ կեանքում մի տեղում կպած, գերեզման կըմտնեմ ինչպէս մէկ անբախտ և ամենից ծաղրուած նկարիչ։ Այո՛, Եթէ Էմիլը չիմէր... ետ միալն նորանից եմ վախենում։ Նա կը յաղթէ և իմ բոլսր աշխատանքս զուր կ'անցնի։ Ա՛խ, Աստուած իմ, Աստուած»։

Անշարժ կանգնած էր Էմիլը։ Իսկ Թէոդորը նորից առաւ վրձինը և նոր ուժով ու եռանդով սկսեց նկարել։ Կամաց, կամաց թաթերի վերայ դուրս գընաց Էմիլը, մտաւ մօտակայ քաղաքալին պարտէզը, որ ազատ տեղում մենակ կարողանայ մտածել իւր լսածների մասին։

«Ես շատ եմ խղճում Թէոդորին, ասում էր նա։ «Նա չափազանց աշխատում է, բայց զուր է, որովհետև նա շատ վըրդովուած և յուսահատուած է։ Նա ինձանից տաղանդաւոր է, բայց այս անգամ ես կըտանեմ յաղթութիւնը, քանի որ ես նկարում եմ Հանգիստ և ուրախ սըր-»

տով։ Իմ ձեռքս է նորան բաղդաւորացնելը. Եթէ ուզենամ պատկերս չվերջացնել, նա կըստանալ մըցտնակը։ Բայց ինչպէս իմ վառքս ու պատիւս զոհեմ. ախ, ո՞րչափ դժուար է զրկուել ալզպիսի անունից։ Բոյց մի և նոյն ժամանակ խեղճ Թէոդորը քանի՛ տարի է, որ ուզում է Իտալիա գնալ. միթէ ես պէտք է նորայուսերը ոչնչացնեմ»։

Էմիլը չէր կարող ոչինչ վճռել. Նա տատանվում էր, ինչպէս որ մակորկը խիստ ալեկոծութեան ժամանակ։ Նա համ վճռում էր, որ Թէոդորին թողնի մըցանակը, համ չէր ուզում ինքը զրկուել վառքից։ Վերջապէս նա բարձր ծիծաղեց։

«Ի՞նչ լիմարն եմ ես» ասաց նա։ «Իսկ խենթ եմ. ինչ գիտեմ, որ իմ նկարս Թէոդորինից լաւ կըլինի։ Զէ, ես դեռ առաջ հաստատը կ'իմանամ և յետոյ կըվճռեմ, թէ ինչպէս պէտք է վարուեմ։ Մեր տեսուչն ինձ հաւանում և

սիրում է. ուրեմն այդ նկարները գեռ  
ցուցահանդէս չտարած, թող նա տեսնի  
ու որոշէ, թէ որինս է աւելի լաւը:

Այդպէս նա հոգսերից ազատուելով,  
գնաց տուն:

Միւս օրը նա խնդրեց տեսչին, որ  
իրան հետ գնայ Թէոդորի նկարը աես-  
նելու: Թէոդորն, ինչպէս միշտ, այս ան-  
գամ էլ նստած էր նկարատախտակի ա-  
ռաջ և նկարում էր: Տեսուչն երկար նա-  
յում էր այդ աշխատանքին և ամեն ըո-  
պէ նորա երեսի վերայ աւելի ու աւելի  
բաւականութիւն էր երեւում:

Այս նկարը շատ լաւ է և միան-  
գամայն արժանի է մըցանակի, ասաց նա  
վերջապէս: Աշխատիր ջանասիրութեամբ,  
Թէոդոր, և մի յուսահատուիր: Ես յոյս  
ունեմ, որ դու ժամանակին լաւ նկարիչ  
կըդառնաս. քեզ միայն հարկաւոր է գոնէ  
մէկ տարի իտալիա գնալ. այնտեղ գե-  
ղարսւեստի իսկական դպրոց է. և այն-  
տեղ միայն գեղարուեստագէտը վերջնա-

*Սանրուպնան Դպրոց  
ԵԿԵ*

կանապէս կատարելագործվում է: Խակի:

Կարմրած թշերով ու փայլուն աչ-  
քերով լսում էր Թէոդորը յարգելի վար-  
ժապետի ու տեսչի կարծիքը և նոր ե-  
ռանդով ու սիրով սկսեց աշխատել, երբ  
նոքա հեռացան: Նա նորից յոյս առաւ  
և շարունակեց իւր գործը:

Դուք այնպէս գովեցիք Թէսդորի  
նկարն, ասաց Էմիլը տեսչին, երբ նոքա  
փողոցումն էին, որ ես կ'ուզէի իմ պատ-  
կերիս մասին էլ իմանալ ձեր կարծիքը.  
Խնդրեմ, մի մերժէք ինձ:

Մեծ ուրախութեամբ, ասաց տե-  
սուչը, և Էմիլի հետ մտաւ նորա պարա-  
պելու սենեակը:

Էմիլն իւր պատկերն այնպէս դրեց,  
որ լաւ յոյս ընկնի վրէն և սրտատրով  
սպասում էր տեսչի կարծիքին: Թէոդորի  
գովասանքը լսելուց լետոյ, նա վախե-  
նում էր, որ իրան նկարն այնքան էլ ե-  
րևելի չի կարող լինել, ինչպէս որ ինքը

կարծում էր. Բայց շուտով նա հակառակը լսեց:

Թէոդորի նկարած տեսարանը շատ կանոնաւոր պատկեր է, ասաց տեսուչը. բայց ես վախենում եմ, որ քոնը կրտանի մըցանակը: Թէև նորա ու քո աշխատութեան մէջ զանազանութիւնն այնքան էլ մեծ չէ, բայց և այնպէս, դու կըլաղթես: Ես շատ եմ խղճում քո ընկերին. ես սրտանց կ'ուզէի, որ նա արժանանար այդ մըցանակին:

Քիչ լետոյ տեսուչը գնաց. իսկ էմիլը նորից սկսեց մաքառել իւր մեծահոգութեան և ինքնասիրութեան հետ... Երկար տեսեց այդ մաքառումը, մինչև որ նա մի որոշ բան վճռեց: Վերջապէս ցուցահանդէսը բացուեց: Պատկերները կախուած էին ցուցահանդիսի մեծ դահլիճում և մասնագէտ ու գնահատող նկարիչներն ուշադրութեամբ նայում էին ամեն մէկ նկարին, որ իմանան թէ ո՞րն աւելի լաւ ու կանոնաւոր է:

Նատ սրտեր բաբախում էին, երբ մի քանի աչքեր քննում էին այս կամ այն նկարը և բոլոր աշակերտները միատեսակ յուզմունքով սպասում էին նոցավճռին: Նոցանից ամեն մէկը թէ վախենում և թէ յոյս ունէր, բայց ամենից շատ յուզուած էր Թէոդորը. Նա կամ գեղնում կամ կարմրում էր և ոչ մի կերպ չէր կարող գոնէ արտաքուստ հանգիստ երևալ: Նորա աչքերը շարունակ փնտուում էին էմիլի նկարը. բայց այդպատկերը չկար և նա կարծում էր թէ շփոթուած լինելուց նա բան չի տեսնում: Շուտով նա նկատեց էմիլին, որը սեան մօտ կանգնած, անհոգ կերպսվ սպասում էր վճռին: Էմիլի ժայիտն ինչպէս սուր գանակ ցցուեց Թէոդորի սըրտում, որովհետեւ նա կարծում էր թէ եմիլը հաստատ գիտէ, որ կըլաղթէ և այդպատճառով էլ ժպտում է:

Վերջապէս այդ անտանելի դրութիւնն անցաւ: Պատաւորները հաւա-

քուեցին միւս սենեակում և խորհուրդ  
անելուց յետոյ մրցանակ նշանակող հա-  
րուստին յայտնեցին իրանց կարծիքը։ Հա-  
րուստ բարերարը հաւանեց նոցա ընտ-  
րութեանը և կանգնեց սենեակի մէջ տե-  
ղը, որ յայտնէ նոցա վճիռը։ Դահլիճում  
տիրեց խորը լուռթիւն։

Մասնագէտներն ամենից շատ գլ-  
նահատել են Թէոդոր Շերմի նկարը. յայտ-  
նելով նոցա կարծիքն երիտասարդ նկար-  
չին, ինքս էլ մի քանի խօսք կ'աւելաց-  
նեմ, որ ես նոյնպէս չափազանց հաւա-  
նում եմ, նա ինձ մեծ ուրախութիւն  
պատճառեց իւր այդ գեղեցիկ աշխատան-  
քով։

Այդ խօսքերի ժամանակ Թէոդորն  
զգաց, որ արիւնը գլուխը խփեց. նա ու-  
րախացած՝ ցնորուածի նման մօտեցաւ  
հարուստին, որը քնքութեամբ նորա  
ձեռքը բռնեց և միքանի ջերմ ու գո-  
վասանական խօսք առաց, որոնք անչափ  
դուր եկան Թէոդորին։ Այդ ժամանակ

Էմիլը մի տեսակ տխուր կերպով նայում  
էր ընկերի վերայ, բայց շուտով այդ տը-  
խուր հայեացքը պտյծառացաւ։ Ընծան  
ստանալով, Թէոդորը համարձակ կերպով  
նայեց Էմիլին, որ խօսն իւր ձեռքը մեկ-  
նեց երջանիկ ընկերին ասելով։

Մրտանց քեզ երջանկութիւն եմ ցան-  
կանում. դու միանգամայն արժանի էիր  
այդ մրցանակին։

Բայց ո՞ւր է քո պատկերը. հարց-  
ըց Թէոդորը։ Ես չէի կասկածում, որ  
դու կըտանէիր…

Ես չկարողացայ վերջացնել, պատաս-  
խանեց Էմիլն ուսերը շարժելով։ Ես շատ  
մեծ չափով սկսեցի և էլ ժամանակ չու-  
նեցայ ալրծնելու. հիմայ այդ աշխատանքո  
կըթողնեմ միւս մրցանակին։

Երբ այդպէո ընկերներն իրար հետ  
խօսում էին, նորանց մօտեցաւ տեսուչը  
և հանագով Էմիլի վերայ մատը թափ  
տուեց ու ասաց։

Դու շատ ծոյլ ես. բայց այդ ո-

չինչ, ես արդէն մեք բարի խնամակալի  
մօտ գովեցի քո պատկերը և նա ուզում  
է անպատճառ տեսնել: Թոյլ կըտամ, որ  
հէնց այսօր ճաշից յետոյ գանք քեզ մօտ:

Դ հարկ է, Եմիլը համաձայնեց: Հան-  
դէսն էլ շուտով վերջացաւ: Թէոդորի ա-  
նունն ամեն մարդ կըկնում էր և բոլորն  
էլ գովում էին նորան. մինչև անգամ  
Թէոդորի թշնամիներն էլ նորա կողմն  
էին և չէին նախանձվում, որովհետեւ նա  
իւր համեստութեամբ ամենքի սիրելին էր  
դարձել:

Այդ նոյն երեկոյին, երբ Թէոդորը  
հանգիսա նստած խօսում էր իւր տնե-  
ցոց հետ Իտալիա գնալու մասին, Եմիլը  
շնչասպառ ներս ընկաւ և ուրախ սւրախ  
գրկեց իւր ընկերին:

Ես էլ քեզ հետ գնում եմ, սի-  
րելի Թէոդոր, ասաց նա: Եթէ դու սպա-  
սես, որ ես իմ նկարս վերջացնեմ, մենք  
միասին կ'երթանք հարաւ դէպի Իտա-  
լիա: Մեր բարերարն իմ պատկերս գնեց

և այնքան փող տուեց, ինչքան որ քեզ  
մըցանակի համար:

Հիմայ ուղիղ որ ես բաղդաւոր  
եմ, արտասուքն աչքերին ասաց Թէոդո-  
րը: Ես շատ ուրախ եմ, որ քեզ հետ ա-  
նարդար չվարուեցին: Ես երբէք մըցա-  
նակը չէի ստանայ, եթէ որ դու քո նը-  
կարդ բերէիր և դեռ մինչև հիմայ էլ  
այդ միտքն ինձ տանջսւմ է, որ դու իմ  
օգտիս համար զոհեցիր այդ: Ես գիտեմ,  
որ դու կարող էիր աշխատանքդ վեր-  
ջացնել, եթէ ուղենալիր. ինձ տեսուչն  
էլ ալդպէս տաց:

Ա՞ն, չէ, չէ, սիրելի ընկերս. բա-  
ցագանչեց Եմիլը, որն երբէք չէր ուզե-  
նալ, որ իւր գաղտնիքն իմացուի: Քեզ  
զուը մի տանջիր ալդպիսի կարծիքներով.  
առաջդ նալէ, անցեալը թո՛ղ և ուրա-  
խացիր, որ լաղթանակը տարար: Ուրեմն  
գնանք Իտալիա, Իտալիա:

Ալ՛, այն, գնանք Իտալիա, կըկնեց  
Թէոդորը:

Միքանի շաբաթից յետոյ երկու  
ընկերները ճանապարհ ընկան դէպի օրհ-  
նուած երկիրը։ Երկուսն էլ գոհ ու եր-  
ջտնիկ էին, իսկ Եմիլը բացի այդ՝ իւր  
սրտումը պահում էր և այդ գեղեցիկ  
վարմունքի գաղտնիքը։



1452

2013

Նոյն թարգմանչինն է

Ա. 4.

1	Յովհան Գուտտենբերգ	.	.	—	15
2	Դոկտօր Ջէնսեր	.	.	—	20
3	Մանկական Թատրօն	.	.	1	—
4	Իբուէնի, Կորա	.	.	—	30
5	Լիր Ալքայ	.	.	—	5
6	Գայլ	.	.	—	3
7	Թուղթ և Հին Գրքեր (Օստրօգօրսկի)	.	.	—	5
8	Տիրօլացի Աղջեկ և Ժլատ	.	.	—	5
9	Մեր Պապի Գաւազանը	.	.	—	5
10	Անհանգիստ Գիշեր	.	.	—	5
11	Որսի գնդակ	.	.	—	5
12	Մայրական սէր	.	.	—	5
13	Մըցումն	.	.	—	5

